

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԵԶ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԴԱՑԻՈՑ

ՅԱ.ՓՐԻԿԻ

(Տես Երես 254.)

— Կը կարծես . կը խարուիս Տիք :
— Ատոնց իւրաքանչիւրին համար մէկ
դնտակէ աւելի ունինք :

— Հապաթէ որ գունտին վերի կողմին
վրայ յարձըկին ինչպէս կը հանդիպ-
ցընես անոնց : Երեակայէ թէ դու հիմա
վարը գետինը առիւծներու խումբի մը
դիմաց կը գտնուիս և կամ ովկիանո-
սին մէջ շանաձկանց խումբի մը : Օդա-
չու ճանապարհօրդաց համար հաւա-
սարապէս վտանգաւոր վիճակ մըն է :

— Անկատակէ է ըսածդ , Սամուէլ :

— Ամենելին անկատակ , Տիք :

— Սպասենք ուրեմն :

— Սպասէ : Պատրաստ կեցիր յար-
ձակման մը դէմ , սակայն առանց իմ
հրամանիս կրակ մը ըներ :

Թռչունք այն ատեն քիչ հեռաւորու-
թեամբ հաւաքուելով կը կուտէին . ո-
րոշ կերպով կը տեսնուէր ինչպէս սաս-
տիկ կանչուըռոտելնէն փետրազուրկ կո-
կորդնին կը ձգտէր . իրենց աճառուտ
կատարը , մանուշակագոյն այտուցնե-
րով ցցուեալ կատաղաբար կը տնկուէր :
Հասակաւ ամենամեծ էին . մարմիննին
երեք ոտքէ աւելի երկայն էր , և իրենց
սպիտակ թեերուն ստորին կողմը ա-
րեւն լուսովը կը շոշողար . կարծես
թէ թեաւոր շանաձկունք էին , այնպէս
սաստիկ էր նմանութիւննին այդ լու-
զականաց հետ :

— Մեր ետեէն կու գան , ըսաւ տոք-
դորը տեսնելով ինչպէս դունտին հետ
իրենք ալ վեր կ'ելլէին . որչափ ալ ջա-
նանք վեր բարձրանալու իրենց թեերը
զանոնք մեզմէ շատ աւելի վեր կընան
հանել :

— Ի՞նչ ընելու է ուրեմն , հարցուց
Քէննըտի :

Տոքդորը պատասխան չտուաւ :

— Մտիկ ըրէ , Սամուէլ , ըսաւ դար-
ձեալ որասրդը . այդ թռչունները տաս-
նըորս են . մենք բոլոր զէնքերնիս ալ
զործածելով տասնըեօթը հարուած
պատրաստ ունինք : Չկայ միջոց մը զա-
տոնք ջնջելու կամցրուելու : Ես ատոնց
մէկ մասին հոգը վրաս կ'առնում :

— Ճարպկութեանդ վրայ տարակոյս
չունիմ , Տիք . յօժարակամկ'ընդունիմ
թէ քարապինայիդ առջևէն անցնող-
ները ապրանաց չեն . սակայն դարձեալ
կը կրկնեմ , որ եթէ գունտին վերի կի-
սաբուրին վրայ յարձըկին , ալ դու զա-
նոնք տեսնալ չկարենաս պիտոր . այդ
մեղ վեր բռնող պատեանը ծակծկեն
պիտի , և տես որ մենք հիմա երեք հա-
զար ոտք բարձր կը գտնուինք :

Այս ատենս ամենէն վայրագ թրո-
չուններէն մէկը , կտուցքն ու մագիլ-
ները բացած ու խածնելու և պատը-
տելու պատրաստ շիտակ Վիկտորիայի
վրայ յարձըկեցաւ :

— Հնար , հնար , կանչեց տոքդորը :

Հազիւ թէ խօսքը լմնցուցեր էր , երբ
թռչունը ՚ի մահ հարուածեալ , օգոսն
մէջէն գլրելով վար կը կործանէր :

Քէննըտի երկու հարուածով հրա-
ցանը ձեռքն առեր էր . ձոյ ալ միւսին
վրայ ձեռք կ'երկընցնէր :

Շառաշմունքէն սարսաված գոն-
տորք առ վայր մը կանկ առին . սա-
կայն շուտ մը նորէն մեծ կատաղու-
թեամբ վրայ յարձըկեցան :

Քէննըտի ուրիշ մէկ հարուածով մը
աւելի մերձաւորին վիզը կոտրեց . իսկ
ձոյ ուրիշ մը թեր ջախջախեց :

— Մնացածը տասնըմէկ է , ըսաւ :

Սակայն անատեն թռչունք կոռուի
եղանակը փոխեցին , և միաբան ամենը
վիկտորիայէն վեր բարձրացան : Քէն-
նըտի ֆէրկըսնի երեսը նայեցաւ :

Տոքդորն իր եռանդուն և անայլայ-
լակ ոգւսվը հանդերձ գոյնը նետեց :
Առ վայր մը ահաւոր լուութիւն մը պա-
տեց : Ապա ճռնչող պատառոտում մը

Նսուեցաւ, ինչպէս թէ մետաքսեայ կերպաս մը պատուտէին, և նաւակը երեք ճանապարհորդաց ոտից ներքել վար սկսաւ գահավիժիլ:

— Ա՛լ կորսուած ենք, կանչեց ֆէր. կըսըն ծանրաշափին նայելով որ երադարար վեր կը բարձրանար:

Ապա յաւել.

— Նաւախիճը դուրս թափեցէք, դուրս:

Մէկ քանի րոպէի մէջ բոլոր քարձի կտորներն անյայտ եղեր էին:

— Դեռ ևս իյնալու կը շարունակենք . . . Զրին արկղերը պարպեցէք . . . ձոյ, կ'ըմբռնես . . . Լճին մէջ կը գահավիժինք :

Ճոյ հրամանին հնազանդեցաւ: Տոքդորն գլուխը գէպ 'ի վար կարկառեց. լիճը կարծես թէ բուռն մակընթացութեամբ գէպ 'ի իրեն կը բարձրանար. առարկայք յայտնի կերպով կը մեծնային. նաւակն ալ հազիւ թէ երկու հարիւր ոտք բարձր էր Զատին մակերևոյթէն:

— Պաշարները, պաշարները, կանչեց տոքդորը:

Եւ անմիջապէս զանոնք պարունակող արկղը օդուն մէջէն վար գահավիժեցաւ:

Գահավիժման երագութիւնը նուազեցաւ. սակայն գժրազդները գեռ ևս իյնալու կը շարունակէին: Եւ գժրազդարար ալ լճին մէջ:

— Նետեցէք, նետեցէք գեռ ևս, կանչեց առքդորը յետին անդամ մը:

— Ա՛լ նետելու բան մը չմնաց, ըսաւ Քէննըտի:

— Այո՛, պատասխանեց լակոնաբար ձոյ կուրծքը երագաբար խաչակնքելով:

Եւ անմիջապէս ինքզինքը նաւակէն դուրս նետեց և անյայտ եղաւ:

— Ձոյ. Ձոյ. կանչեց տոքդորը զարհուրած:

Այլ ձոյ այնուհետև անոր ձայնը լսելու չը կրնար: Վիկուրիան թեթևնալով նորէն սկսաւ վեր բարձրանալ մինչեւ գետնէն հազար ոտք բարձրութեամբ, և հողմը գատարկ պատեանին մէջ գո-

գանալով՝ լճին գէպ 'ի հիւսիսային ափունքը կը մնէր զգունտը:

— Կորսուեցաւ. ըսաւ որսորդը յուսահատ ձեւ մը ընելով:

— Մէզ ազատելու համար կորսուեցաւ, պատասխանեց ֆէրկըսըն:

Եւ այն աներկիւղ մարդոց աչքերէն երկու կաթիկը արտասուաց վազեցին. զլուխնին խոնարհեցընելով ջանացին գոնէ հետք մը գտնել թշուառ ձոյին. այլ շատ հեռացեր էին:

— Ի՞նչ բանի ձեռք զարնելու ենք, հարցուց Քէննըտի:

— Վար գետինը ինչնալ անմիջապէս որ կարելի ըլլայ, Տիք, և ապա սպասել:

Վաթսուն մղոնի ընթացքէ մը ետքը վիկուրիան լճին հիւսիսային կողմը ամայի ափունքի մը վրայ վար ինչաւ. խկոյն խարիսխները ցած ծառի մը վրայ կոււեցան, որուն վրայ որսորդը զանոնք ամուք մը հաստատեց:

Գիշերը վրայ հասաւ. այլ ոչ ֆէրկըսըն և ոչ Քէննըտի կարող եղան վայրկեան մը քուն ըլլալ:

Գլուխ լգ.

Վարկածք. — Վիկուրիային հաւասարակառիւնական վերահաստատուիլը. — Նոր հաշիք տորդոր ֆէրկըսընի. — Քէննըտիին ըրած որտրուրիւնը. — Զատ լձին կատարեալ քննուրիւնը. — Դանկալիա. — Դարձ. — Լարի:

Յաջորդ օրը, 43 մայիսի, ճանապարհորդը նախ իրենց գտնուած ափունքին մասը քննեցին. որ անհուն ճահճի մը մէջ տեսակ մը ցամաքային կղզի մընէր: Այս հաստատուն հողի կտորին չորս կողմը, աշք շտեսնելու չափ տարածութեամբ, եղէզներ բուսած կային եւրոպայի մէկքանի ծառերու չափ մեծ:

Այն անանցանելի ճահճները վիկուրիային ղիրը կ'ապահովցնէին: միայն լճին կողմէնհսկելու էր. ջրին ընդարձակ մակերեսոյթը երթալով կ'ընդլայնէր, մասնաւորապէս արևելեան կողմը, և հորիզոնին վրայ ամենելին բան մը

չէր տեսնուեր, ոչ ցամաք երկիր և ոչ կղզի մը :

Երկու բարեկամները դեռ ևս չէին համարձակած իրենց դժբաղդ բարեկամին վրայ խօսք ընելու : Քէննըտին առջինը եղաւ իր կարծածը տոքդորին հաղորդելու :

— Գուցէ ձոյ կորսուած չըլլայ, ըստ . ճարպիկ երիտասարդ մընէ, և իրեն պէս լողորդ մը դժուարաւ կը գտնուի . դժուարութիւն չէր քաշէեր խմիմպուրկ ֆրիր օֆ ֆորբը լողալով անցնելու : Մենք զինքը նորէն պիտոր գտնենք, բայց թէ երբ և ինչպէս չեմ գիտեր . բաւական է որ մենք մեր կողմանէ ինչ և իցէ առիթ դանց չընենք որ իրեն միջոց տանք մեղի հասնելու :

— Աստուած փոսքիդ լսէ, Տիք, պատասխանեց տոքդորը յուղեալ ձայնիւ, ինչ կու դայ ձեռքերնէս ընենք պիտի մեր բարեկամը նորէն գտնելու . նախ մեր տեղւոյն դրեցը ծանօթանանք : Բայց ամեն բանէ յառաջ, ազատենք զվիկտորիան այդ արտաքին պատեանէն որ ալ օգուտ չունի . զմեզ վեց հարիւր յիսուն լիտր մեծ ծանրութենէ մը ազատած կ'ըլլանք, որ ըստ ինքեան կ'աժէ :

Տոքդորն ու Քէննըտի անմիջապէս դործի ձեռք զարկին, այլ մեծ դժուարութիւն կրեցին . Հարկ եղաւ այն դիմաց կուն կերպասը կտոր կտոր փրցնել, և նեղ նեղ երկիզի պէս կտրտել ցանցին վերտերէն հանելու համար : Գիշատիչ թռչնոց կտուցքէն պատճառեալ պատըուտածքը շատ մը ոտք երկայն էր :

Այս գործողութիւնը չորս ժամքշեց . բայց վեջապէս ներքին գունտը, բոլորովին ազատած, ամեննեին կերպով մը մնասուած չերևցաւ : Վիկտորիային ծանրութիւն այն ատեն մէկ հինգերորդ մը նուազեցաւ : Այս տարբերութիւնը դՔէննըտի զարմացնելու չափ բաւականապէս զգալի եղաւ :

— Բաւական ըլլայ պիտի, հարցուց տոքդորին :

— Կախ մ'ունենար, Տիք . ես հաւասարակութիւնը . կարգի կը դնեմ, և

եթէ մեր խեղճ ձոյն նորէն դառնայ, կարենանք պիտի հետը նորէն մեր սովորական ճամբան բռնելու :

— Մեր գահավիժելու ատենը, Սամուէլ, եթէ յիշատակներս ճիշտ են, կղզիէ մը հեռու եղած պիտոր չըլլայինք :

— Կը յիշեմ յիրաւի . սակայն այդ կղզին, ինչպէս բոլոր Զատիկն միւս կըղղիները, անտարակոյս հէն և աւագակ մարդոց բնակարան է . անշուշտ այն վայրենիք մեր ձախորդութեանը ականատես եղած պիտոր ըլլան . և եթէ ձոյ ձեռքերնին իյնայ, եթէ սնապաշտութենէն պաշտպանութիւն չգտնայ, ինչ ըլլայ պիտի :

— Ինքը ճարպիկ մարդ է, քեզի դարձեալ կը կրկնեմ . ես իր ճարպկութեանը և խելացիութեանը վրայ դրած եմ վստահութիւնս :

— Կը յուսամ : Հիմա, Տիք, գնա շրջակայքը որսորդութիւն ընելու, այլ առանց շատ հեռանալու . Հարկ է մեր ուտելիքները նորոգենք, որոնց մեծագոյն մասը զոհ ըրինք :

— Շատ աղէկ, Սամուէլ . շատ չուշանամ պիտի :

Քէննըտի երկու հարուածով հրացան մ'առաւ և բարձր խոտերուն մէջէն դէպ 'ի մերձակայ անտառ մը գնաց . շուտ մը ետեկ ետե շարունակեալ հարուածներէն հասկըցաւ տոքդորը որ որսորդութիւնը առատ ըլլար պիտի :

Մի ենոյն ատեն տոքդորը ձեռք զարկաւ նաւակին մէջը պահուած առարկաները աչքէ անցընելու, և երկրորդ դունտին հաւասարակութիւնը հաստատելու . գեռ ևս երեսուն լրտրի չափ բնել . միքան մնացեր էր, քիչ մը չայ ու գաֆէ, գրեթէ մէկուկէս կալոնաչափ օղի, և բոլորովին պարապ ջրի արկղ մը . բոլոր շորցած միսը անյայտ եղեր էր :

Տոքդորը գիտէր որ առաջին գունտին ջրածնին կորստեամբը, վերելական ուժը գրեթէ ինը հարիւր լիտրի նուազեր էր . որով հարկ եղաւ որ այս տարբերութիւնը հաշուի առնելով իր հաւասարակութիւնը հասատատէ : Նոր Վիկտորիան երեսունուիրեք հազար չորս

Հարիւր ութառն խորանարդ ոտք կազ կը բովանդակէր . ընդարձակելու կաղմարանը աղէկ վիճակի մէջ կ'երենար . ոչ բարդը և ոչ օձապտոյտը վնասուած էին :

Նոր Գունտին վերելական ուժը ուրեմն դրեթէ երեքհազար լիտր էր . միացը-նելով կազմարանին , ճանապարհորդաց , ջրի պաշարին , նաւակին և անոր կարասեաց ծանրութիւները , և յիսուն կալոնաշափ ջուր ու հարիւր լիտր թարմմիս մէջը առնելով , տոքդորը երկու հազար ութը հարիւր երեսուն լիտր ծանրութեան կը համեր : կրնար ուրեմն չնախատեսած պարագայից համար , հետը հարիւր եօթանասուն լիտր նաւախիճ առնել , և օդապարիկն այն ատեն իր շըրջապատ օդուն հետ հաւասարակշիռ կ'ըլլար :

Ուստի ըստ այնմ իր պատրաստութիւներն ըրաւ , և ձոյին ծանրութեանը տեղ հաւասար ծանրութեամբ նաւախիճ դրաւ նաւակին մէջ : Բոլոր օրը այս այլ և այլ պատրաստութեանց գործածեց , և այսպէս Քէննըտիին դարձած ժամանակը ամենայն ինչ լմնցած էր : Որսորդը աղէկ որսորդութիւն մը ըրած էր . հետը մեծ բեռ մը սագերու , վայրենի բաղից , կտցարներու և ուրիշ ջրային թռչնոց կը բերէր . որոնք սկսաւ անմիջապէս պատրաստել ու ծուխի բռնել : Իւրաքանչիւր կտոր , նուրբ գաւազանի մը վրայ անցուցած , կանաչ փայտերու կրակին վրայ կախեց : Երբ եփուածքը բաւական երեցաւ Քէննըտիին , որ աղէկ կը հասկնար , բոլորը նաւակին մէջ համբարեց :

Յաջորդ օրն որսորդը իր պաշարները կատարեալ լրացնէր պիտի :

Այս աշխատութեանց մէջ էին ճանապարհորդք , երբ գիշերը վրայ հասաւ . ուստի բեմմիքանով , պաքսիմատով ու չայով ընթրիք ընելէն ետև , խոնջութիւն որ ախորժակնին բացեր էր՝ քուներնին ալ բրաւ : Իւրաքանչիւր իր պահպանութե կարգին խաւարը խուզարկեց , երբեմն երբեմն ձոյին ձայնը լսել կարծելով . բայց ափսոս որչափ հեռի էր

այն ձայնը զոր այնչափ կը փափաքէին լսելու :

Հազիւ օրն իր առջի ճառագայթներն սկսեր էր , իսկոյն տոքդորը դիէննըտի արթնցուց :

— Շատ մտածեցի , ըսաւ անոր ; թէ ինչ պէտք է ընենք մեր ընկերը գտնելու համար :

— Ինչ ալ ըլլայ մտածութիւնդ , Սամուէլ , կ'ընդունիմ . ըսէ ինչ է :

— Ամեն բանէ յառաջ կարևոր է որ ձոյ մեր վրայ տեղեկութիւն ունենայ :

— Անտարակոյս : Եթէ այն բարի երիտասարդը միտքը չի դնէր որ մենք զինը լրեալ կը թողննք :

— Ի՞նքը : Զմեղ շատ աղէկ կը ճանչնայ : Երբեք կարելի չէ որ այդպիսի մտածութիւն մը միտքը գայ . սակայն պէտք է որ մեր ուր ըլլալը զիտնայ :

— Եւ ինչպէս :

— Հիմա նաւակը կը նստինք ու նորէն օդու մէջ կը բարձրանանք :

— Հապա եթէ հովը զմեղ առնէ առկէ տանի :

— Բարեբաղդաբար այդ բանը չըլլայ պիտի : Նայէ , Տիք , հովը զմեղ նորէն լճին վրայ կը տանի , և այս պարագան որ երէկ կրնար դժնդակ ըլլալ , այսօր ընդհակառակին յաջողէ : Մեր բոլոր ճիգը պիտոր ըլլայ ուրեմն բոլոր օրը մենք զմեղ այդ ընդարձակ ջրին վրայ բռնել : Ձոյ կարելի չէ որ չտեսնայ զմեղ հոն ուր իր աշքերը ուղղեալ պիտոր ըլլան անդագար : Գուցէ նաև յաջողի մեղի զգացնելու իր ուր ըլլալը :

— Եթէ մինակ և ազատ է , անտարակոյս կ'ընէ :

— Եւ եթէ գերի ընկած ըլլայ , ըսաւ գարձեալ տոքդորը , բնիկը սովորութիւննենալով իրենց գերիները բանտելու , զմեղ պիտոր տեսնէ ու հասկընայ պիտի մեր խուզարկութեանց նպատակը :

— Սակայն , ըսաւ Քէննըտի , — որովհետեւ պէտք է ամենայն ինչ նախատեսել , — եթէ ամենակն նշան մը չզըտնանք , եթէ հետք մը թողած չըլլայ իր անցքին , ինչ պիտոր ընենք :

— Կը ջանանք նորէն լճին հիւսի-

սային կողմը իյնալու, կարելի եղածին չափաքի տեսութեան տակ զմեղ բռնելով. հոն կը սպասենք, ափունքը կը քննենք, այն եզերքները կը փնտաենք, ուր անշուշտ ձոյ փորձ փորձէ պիտորդիմելու, և անկէ չենք հեռանար մինչեռ չընենք ինչ որ պէտք է զինքը դանելու համար:

— Հապա ճամբայ ելենք, ըսաւ որսորդը:

Տոքդորը ճշդիւ զիրքն առաւ այն ցամաք երկրին կտորին ուսկից ճամբայ կ'ելլէր. աշխարհացոյցին ու կարկինին չափին նայելով հաշուեց որ Զատին հիւսիսային կողմը կը գտնուէր, Լարի քաքին և ինձեմինի զիւզին մէջ տեղ, որոնց Տընամպետը այց ելեր էր:

Այս ատենս Քէննըտի իր թարմ մսի պաշարը լրացուց: Թէպէտ և շրջակայ ճահիճները ռնգեղիւրի, լամանգէնի և ձիագետիի նշաններ կ'երեցնէին, ինքը առիթ չունեցաւ ամենին այդ վիթխարի կենդանիներէն մէկի մը հանդիպելու:

Առաւօտեան ժամը եօթին մեծ զըժուարութք խարիսխը ծառէն մեկդի առին, գործ մը որ ձոյ շատ աղէկ գրուստանել զիւտէր: կազզ ընդարձակեցաւ ու նոր վիկտորիան երկու հարիւր ոտք օգու մէջ բարձրացաւ: Վարանիլ մը երեցուց առ վայր մը իր չորս զին շրջելով. բայց վերջապէս, բաւական բուռն հօսանքէ մը առնուելով՝ քսան մզոն երագութեամբ առ ժամ քշուեցաւ:

Տոքդորը շարունակ ինքզինքը երկու հարիւրէ մինչեւ հինգ հարիւր ոտք բարձրութեան մէջ բռնեց. Քէննըտի ստէպ ստէպ իր քարապինան կը պարպէր կղզիներուն վրայէն. ճանապարհորդք նաև անխոհեմութեն չափ կը մերձենային, աչքով ծառնոցները, թփուտները, մացառները կը քննէին, և ուր հովանոց մը, ուր ժայռի խոռոշ մը կրնար պատապարան ըլլալ իրենց ընկերոջը ամեն զին կը զննէին: Մինչեւ լիճը քալող երկայն նաւակներուն մօտերը կ'իջնային: Զինորոք զանոնք տեսնելով, շտապաւ

յուրը կը նետուէին, և յայտնի վախ նշաններով իրենց կզին կ'ելլէին:

— Բան մը չենք տեսնար, ըսաւ Քէննըտի, երկու ժամ խոյզ ու խնդիրնելէն ետեւ:

— Սպասենք, Տիք, ու չվհատինք ճախորդութեան տեղէն հեռու ըլլալու շենք:

Ժամը տասնըմէկին վիկտորիան ին նըտուն միզն տեղ առաջ գնացեր էր. այն ատեն նոր հոսանքի մը պատահեցաւ, որ զրեթէ ուղիղ անկեամբ մը վաթ. սուն միզնի չափ զէպ 'ի արեկելք քշեց զինքը: Մեծ ընդարձակ և շատ բազմա մարդ կղզիի մը վրայ սկսաւ սաւառնել զոր տոքդորը համարեցաւ թէ ֆառամ ըլլայ, ուր կը գտնուէ Պետիամահներու մայրաքաղաքը: կը յուսար ամեն թփուտէ ձոյին դուրս ելելք տեսնալ, վախ շին ու զինքը օգնութեան կանչել: Եթէ ազատ ըլլար, առանց դժուարութեան զինքը կ'ազատէին. իսկ եթէ գերի, քարոզին համար բանեցուցած կերպեր նին գործածելով, շուտ մը իր բարեկամ ներուն քովը կը հասնէր. սակայն բան մը չտեսնուեցաւ. ուստեք շարժմոնք մը չերեցաւ: Յուսահատութեան իյնալու բան էր:

Ժամը երկուք ու կիսուն, վիկտորիան դանկալիոյ հանգէպ կը հասնէր, որ Զատ լին արևելեան ափունքին վրայ գտնուող զիւղ մըն է, և յետին տեղին եղաւ Տընամին խուզարկու ճանապարհորդութեան:

Տոքդորը հովին այս յարատեւ ուղղութք շնչելուն վրայ անհանգիստ եղաւ. կը տեսնէր որ զէպ 'ի արևելք կը քշուէր, զէպ 'ի Ափրիկէի կեղրոնը նետուելով, ուր անհատնում են անհապատք:

— Անհրաժեշտ հարկ է գագարինք, ըսաւ, և նաև գետինը ինչնանք. մասնաւորապէս ձոյին օգտին համար պէտք է զէպ 'ի լիճ զառնանք. այլ չանանք հակաշունչ հոսանք մը գտնելու:

Մէկ ժամէ մը աւելի այլ և այլ զօտեաց մեջ խոյզ ու խնդիր ըրաւ: Վիկտորիան միշտ զէպ 'ի ցամաք երկիր կը դառնար. այլ բարեբազարար հա.

զար ոտք բարձրութեամբ բուռն հով մը
զինքը նորէն դէպ 'ի հիւսիսային արե-
մուտք դարձուց :

Կարելի չէր որ ձոյ լճին կղզիներէն
մէկի մը վրայ արգելական մնար, վասն
դի անտարակոյս միջոց մը կը գտնէր
իր ներկայութիւնը յայտնելու. գուցէ
ցամաք երկիրը տարուած ըլլար : Այս-
պէս տրամախոհեց տոքդորը, երբ Չա-
տին հիւսիսային ափը կրկին անգամ
աշքին առջնը ելաւ :

Խակ մողէ անցընել թէ ձոյ խըզ-
դուած ըլլար, կարելի բան չէր : Իրաւ-
ցընէ զարհուրելի մոտածութիւն մը ան-
ցաւ ֆէրկըսընի ու Քէննըտիի մարէն .
Կոկորդիլոսք անհամար բազմութեամբ
կը գտնուին այն ափունքները : Սակայն
ոչ մէկը և ոչ միւսը սիրտ ըրին այնպիսի
երկիւղ մը մոքերնուն մէջ կերպացնե-
լու : Բայց և այնպէս ատեն մը անանկ
յայտնի կերպով մոքերնուն եկաւ, որ
տոքդորն առանց ուրիշ յառաջարանի
ըսաւ :

— Կոկորդիլոսք միայն կղզեաց կամ
լճին ափունքերը կը գտնուին . ձոյ իր
ճարպկութեամբը զիտէ ինքզինքն ա-
նոնցմէ ճողովրել . միւս կողմանէ ալ
այնչափ վտանգաւոր չեն . Սփրիկեցիք
խակ առանց յարձակմունքերէն վախ-
նալու, անվնաս ջրին մէջ կը լուացուին :

Քէննըտի պատասխան չտուաւ . լա-
ւագոյն կը սեպէր լուել քան թէ վիճել
այդ ահաւոր կարելիութեամբը վրայ :

Իրիկուան ժամը հինգին տոքդորը
Լարի քաղաքը տեսաւ : Բնակիչք կ'աշ-
խատէին բամբակը խրճիթներու առջե
ժողովելու, որ մաքուր և խնամքով պա-
հուած շրջափակներերու մէջ հիւսած
եղէգներով շինուած էին :

Այն յիսունի չափ խրճիթներու ժո-
ղովը, ցած լերանց մէջ տեղ եղող ձորի
մը թեթև մը փոսացեալ գետնի վրայ
շինուած էին : Հովին բռնութիւնը զտոք-
դորը պէտք չեղածին չափ առաջ կը
քշէր . սակայն երկրորդ անգամ մըն ալ
փոխուելով զինքը ճշղիւ այն տեղը բե-
րաւ՝ ուսկից ճամբայ ելած էր, այս-
ինքն այն տեսակ մը ցամաքակղզի՝ ուր

առջի զիշերն անցուցեր էր : Խարիսխը
փոխանակ ծառին ճիւղերուն հանդի-
պելու, ճահճին տիղմին հետ խառնուած
սաստիկ ամուր եղէգանց արձակներու
վրայ կուռեցաւ :

Տոքդորը շատ դժուարութիւն քաշեց
օդապարիկը զուսպ բռնելու . բայց վեր-
ջապէս հովը զիշերուան յառաջելովը
ինջաւ . և երկու բարեկամք, զրեթէ յու-
սահատ, միատեղ հսկեցին :

Իր շարունակուի:

ՀԱՅԻ ՊԱՏՍՈՒՄ ՄՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.Ռ.Ս.Զ.Ի.Ն

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԵՌՈՐԴ

(Տես Երես 234.)

Թռչունք :

Դիպեր է քեզի, սիրելի օրիորդիկ, տես-
նելով թէ ինչպէս թռչունք ապատաբար
և շիտակ իրենց նպատակին օդու մէջ կը
նետուին, առանց փոյթ տանելու պատ-
նիշաց, փոսերու, զետերու, լերանց որ
իւրաքանչիւր քայլի արգելք են մարդուս
իր ճամբուն մէջ, եղած է կ'ըսեմ, որ
անոնց թեերն ունենալու փափազիս և
անոնց հետ թռչուլ երազես : Եթէ երա-
զեր ես ատիկայ, պէտքը չես քաշուիլ
զուրցելու . այդ երազը աշխարհիս հնու-
թիւնն ունի . « Ո՞տայր ինչձ թես աղաւ-
նոյ », կը կանչէր Մարգարէն, զրեթէ ե-
րեք հազար տարի յառաջ . և այն ծիծ-
ուան ու բանտարգելոյն խօսակցութիւն
զոր այնչափ անգամ երգեր են քերթողք .
աշխարհիս բանտերուն վանդակապա-
տից մէջէն իր արձակ կրկնաբանութիւ-
ները ունեցեր է միշտ, բանտից հնա-
րուելէն 'ի վեր :